Քարահունջ գյուղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 61 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 4 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,
Քարահունջը գտնվում է Վարարակ և Քարահունջ գետերի միախառնման տեղում, Գորիս քաղաքից հարավ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են այրեր-բնակարաններ, ամրոց (9-րդ դար), գյուղատեղիներ (Լալքար, Գոմեր, 5-18դդ.), եկեղեցի (Սբ.Հռիփսիմե, 1676թ.), մատուռ (Հազարափրկիչ, միջնադար), գերեզմանոց:
Քարահունջը հայտնի է իր հեղափախական անցյալով: Այստեղ են ծնվել պրոֆեսիոնալ հեղափոխականներ՝ Մ.Սևյանը, Գ.Ղազարյանը, գրող, լրագրող Գ.Արևյանը, ագրոքիմիկոս Ա.Գալստյանը:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 1969 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1735 հա, որից՝
- վարելահող՝ 696 հա, բազմամյա տնկարկ՝ 141 հա, խոտհարք՝ 80 հա, արոտ՝ 280 հա, այլ հողատեսք՝538 հա
- բնակավայրերի հողեր՝ 91 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 10 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝41 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 33 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 9 հա,
- անտառային հողեր՝ 38 հա, որից անտառածածկ՝ 38 հա
- ջրային հողեր՝ 12 հա: